

Հավելված 18

Ֆիզիկական անձանց սպասարկման ընդհանուր պայմանների

Հավատարմության ծրագիր

Ընդունվել է Բանկի Տնօրինության 22.10.2025թ. թիվ 01/27/25 որոշմամբ,
սույն խմբագրությունը՝ 10/07/2026թ. թիվ 01/105/26 որոշմամբ, և ուժի մեջ է 18.08.2026թ-ից:

1. Սահմանումներ

- 1.1. **Հավատարմության ծրագիր** (այսուհետ նաև՝ **Ծրագիր**)՝ Բանկի հաճախորդների խրախուսման նպատակով Բանկի կողմից իրականացվող ծրագիր, որի շրջանակում Բանկը Օրագրում ներառված գործարքների դիմաց տրամադրում է **Ամերիա միավորներ** և/կամ արտոնություններ սույն **Հավելվածով** սահմանված պայմանների և կարգի համաձայն:
- 1.2. **Օրագրի մասնակից** (այսուհետ նաև՝ **Մասնակից**)՝ Բանկի կողմից **Հավատարմության ծրագրում** ներառված **Հաճախորդ**՝ սույն **Հավելվածով** նախատեսված դեպքերում և պայմաններով:
- 1.3. **Ամերիա միավորներ** (այսուհետ նաև՝ **Ameria MyPoint** կամ **AMP**)՝ ոչ դրամական պայմանական միավորներ, որոնք Բանկի կողմից հաշվեգրվում են **Մասնակցի Ամերիա միավորների հաշվին**՝ վերջինիս կողմից կատարած գործարքների դիմաց՝ սույն **Հավելվածով** սահմանված պայմանների համաձայն: **Ամերիա միավորները** չունեն դրամական արժեք **Օրագրից** դուրս, չեն կարող փոխանակվել կանխիկ գումարի, ինչպես նաև չեն կարող փոխանցվել այլ անձանց:
- 1.4. **Ամերիա միավորների հաշիվ**՝ Բանկի կողմից վարվող պայմանական ոչ բանկային հաշիվ, որում հաշվառվում են հոգուտ **Մասնակցի** հաշվեգրված և/կամ նվազեցված **Ամերիա միավորները**: **Օրագրի** յուրաքանչյուր **Մասնակից** ունենում է **Ամերիա միավորների** մեկ հաշիվ: **Ամերիա միավորների հաշվին** առկա **Ամերիա միավորները** արտացոլվում են **Օրենսդրությամբ** սահմանված հարկերը հանված:
- 1.5. **Ամերիա միավորների կուտակում**՝ **Մասնակցի Ամերիա միավորների հաշվին Ամերիա միավորների** համալրման գործընթաց՝ սույն **Հավելվածով** նախատեսված պայմաններով և կարգով:
- 1.6. **Ամերիա միավորների օգտագործում**՝ **Մասնակցի Ամերիա միավորների հաշվին** կուտակված **Ամերիա միավորներով** սույն **Հավելվածով** սահմանված ուղղություններով անկանխիկ վճարումներ կատարելու գործընթաց, որի արդյունքում **Ամերիա միավորները** համամասնորեն նվազում են՝ սույն **Հավելվածով** նախատեսված պայմաններով և կարգով:
- 1.7. **Ընկերություն**՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որի հետ Բանկը համագործակցում է **Օրագրի** շրջանակներում:

2. Ընդհանուր դրույթներ

- 2.1. Սույն **Հավելվածը** սահմանում է Բանկի **Հավատարմության ծրագրի** պայմանները, այդ թվում՝ **Հաճախորդի**՝ **Օրագրում** ներառվելու, **Մասնակցի** համար **Ամերիա միավորներ** կուտակելու, օգտագործելու, զրոյացնելու և **Օրագրի** այլ պայմանները:
- 2.2. **Բանկն** իրավունք ունի միակողմանի կերպով փոփոխել սույն պայմանները **Ընդհանուր պայմաններով** սահմանված կարգով կամ դադարեցնել սույն պայմանները՝ առանց **Մասնակցի** լրացուցիչ համաձայնության:

Սույն պայմանների դադարեցման դեպքում **Ծրագրի** բոլոր առավելությունները, ներառյալ կուտակված **Ամերիա միավորները**, որոնք այդ պահի դրությամբ դեռևս չեն օգտագործվել, կգրոյացվեն:

3. Ծրագրում Հաճախորդին ներառելու պայմաններ

- 3.1. **Ծրագրում** ներառվում են **Բանկի** հաշվետեր և/կամ **Բանկի** ցանկացած քարտատեսակի (բացառությամբ **Բանկի** նվեր քարտերի) քարտապան բոլոր **Հաճախորդները**:
- 3.2. Սույն **Հավելվածը Բանկի կայքում** հրապարակվելու պահից, իսկ սույն **Հավելվածի** պայմաններում այլ ժամկետ նշված լինելու դեպքում, այդ պահին սույն **Հավելվածի** 3.1 կետով սահմանված **Հաճախորդները** համարվում են **Ծրագրի Մասնակից**՝ մինչև այն պահը, քանի դեռ արդեն իսկ **Ծրագրի Մասնակից** հանդիսացող **Հաճախորդը** չի հայտնել **Բանկին Ծրագրին** չմասնակցելու իր կամահայտության մասին:

4. Ամերիա Միավորների կուտակման պայմաններ

- 4.1. **Ամերիա միավորները** կուտակվում են **Բանկի** կողմից **Ծրագրում** ներառված գործարքների կատարման դիմաց՝ ըստ այդ գործարքների համար **Բանկի** կողմից սահմանված միավորների կուտակման դրույքաչափերի:
- 4.2. **Ամերիա միավորները** հաշվարկվում են **Բանկի** հավատարմության միավորների հաշվարկման և հաշվառման համակարգում գործարքի գրանցման պահին՝ **Մասնակցի** կողմից հաջողությամբ իրականացված գործարքի գումարը բազմապատկելով տվյալ գործարքի տեսակի համար սահմանված դրույքաչափով: Արտարժույթով կատարված գործարքի գումարը հաշվարկի համար փոխարկվում է ՀՀ դրամի ՀՀ կենտրոնական բանկի կողմից գործարքի կատարման օրվա դրությամբ հրապարակված արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով:
- 4.3. Հավելյալ քարտերի միջոցով կատարված գործարքների դիմաց **Ամերիա միավորների** կուտակումը կատարվում է հիմնական քարտի քարտապան **Մասնակցի Ամերիա միավորների հաշվին**:
- 4.4. Կուտակված **Ամերիա միավորների օգտագործման** շրջանակներում կատարված անկանխիկ վճարումների դիմաց նոր **Ամերիա միավորներ** չեն կուտակվում:
- 4.5. **Ծրագրում** ներառված գործարքների տեսակները և դրանց համար նախատեսված միավորների կուտակման դրույքաչափերը հրապարակվում են **Բանկի կայքում** և հասանելի են **ՄայԱմերիայում** և **ՄայԱմերիաՄթարում**:
- 4.6. **Ամերիա միավորների** կուտակման համար սահմանված մեկ գործարքի նվազագույն գումարը **հրապարակվում է Բանկի կայքում և հասանելի է Մասնակցի ՄայԱմերիայում և ՄայԱմերիաՄթարում**:
- 4.7. **Բանկի կողմից** սահմանված մեկ գործարքից հնարավոր կուտակվող **Ամերիա միավորների** առավելագույն քանակը, ինչպես նաև **Ընկերության** հետ համատեղ իրականացվող արշավների և ծրագրերի շրջանակում **Ընկերության** կողմից սահմանված մեկ գործարքից հնարավոր կուտակվող լրացուցիչ **Ամերիա միավորների** առավելագույն քանակը հրապարակվում են **Բանկի կայքում** և հասանելի են **Մասնակցի ՄայԱմերիայում և ՄայԱմերիաՄթարում**:
- 4.8. 1 (մեկ) **Ամերիա միավորի** արժեքը համարժեք է 1 (մեկ) ՀՀ դրամի ($1 \text{ AMP} = 1 \text{ AMD}$):
- 4.9. **Ընկերության** հետ համատեղ իրականացվող արշավների և ծրագրերի շրջանակում կարող են կուտակվել լրացուցիչ **Ամերիա միավորներ**՝ ըստ **Ընկերության** կողմից սահմանված դրույքաչափերի և մեկ գործարքից հնարավոր կուտակվող **Ամերիա միավորների** առավելագույն քանակի, որոնք **հրապարակվում են Բանկի կայքում և Մասնակցին հասանելի են ՄայԱմերիայում և ՄայԱմերիաՄթարում**:
- 4.10. **Մասնակցի** կողմից կուտակված բոլոր միավորները հասանելի են **Մասնակցի ՄայԱմերիայում և ՄայԱմերիաՄթարում** արտացոլվող **Միավորների հաշվարկման հաշվին**:

- 4.11. **Ամերիա միավորների հաշվի**, այդ հաշվի մնացորդի և **Ամերիա միավորների** կուտակման, օգտագործման, գրոյացման և չեղարկման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է **ՄայԱմերիայում և ՄայԱմերիաՄթարում**:
- 4.12. **Բանկի** կողմից իրականացվող արշավների և հատուկ առաջարկների շրջանակներում **Մասնակիցների** համար կարող են կուտակել հավելյալ **Ամերիա միավորներ**¹ համաձայն տվյալ արշավի/հատուկ առաջարկի պայմանների:
- 4.13. Կուտակված **Ամերիա միավորները** ենթակա են հարկման եկամտահարկով՝ **Օրենսդրությամբ** սահմանված կարգով: Եկամտահարկով հարկումը **Բանկի** կողմից կատարվում է **Մասնակցի** կողմից միավորների փաստացի օգտագործման պահին:

5. Ամերիա միավորների օգտագործման պայմաններ

- 5.1. **Մասնակիցը** կարող է օգտագործել իր կողմից կուտակված և **Ամերիա միավորների հաշվում** հասանելի **Ամերիա միավորները**՝ կատարելով **ՄայԱմերիայով և ՄայԱմերիաՄթարում** QR/առցանց վճարում¹ QR/առցանց վճարումների ընդունման ծառայության ներքո **Բանկի** հետ համագործակցող ընկերությունների վաճառակետերի տարածքում, ինտերնետային կայքում կամ բջջային հավելվածում: Համագործակցող ընկերությունների ցանկը ներկայացվում է **ՄայԱմերիայում և ՄայԱմերիաՄթարում**:
- 5.2. **Ամերիա միավորներով** հնարավոր է իրականացնել ամբողջական, իսկ **ՄայԱմերիայում և ՄայԱմերիաՄթարում** համապատասխան տեխնիկաձրագրային լուծումների առկայության դեպքում՝ նաև մասնակի վճարում: Ամբողջական վճարման դեպքում **Մասնակիցը** պետք է ունենա բավարար **Ամերիա միավորներ**՝ ապրանքի կամ ծառայության արժեքը ամբողջական վճարելու համար: **Մասնակի վճարման դեպքում** ապրանքի կամ ծառայության արժեքի մի մասը վճարվում է **Ամերիա միավորներով**, իսկ մնացած մասը՝ **Մասնակցի**՝ **Բանկում** առկա բանկային հաշիվ(ներ)ում առկա դրամական միջոցների հաշվին:
- 5.3. **Ամերիա միավորներով** մասնակի վճարումներ չի թույլատրվում իրականացնել: **Մասնակիցը** պետք է ունենա բավարար **Ամերիա միավորներ** ապրանքի կամ ծառայության արժեքը ամբողջական վճարելու համար:
- 5.4. **Մասնակցին** **Ամերիա միավորները** օգտագործման համար հասանելի են դառնում **Ամերիա միավորների հաշվին**՝ **Բանկի** կողմից հաշվեգրելու պահից:
- 5.5. **Մասնակցի** **Ամերիա միավորների հաշվին** կուտակված **Ամերիա միավորները** ճանաչվում են **Մասնակցի** եկամուտ այն պահից և այն չափով, երբ և որ չափով **Մասնակիցն** այդ միավորներն օգտագործում է՝ սույն **Հավելվածով** սահմանված կարգով վճարումներ կատարելով:
- 5.6. **Մասնակցի** կողմից **Բանկի** նկատմամբ ժամկետանց պարտավորություն ունենալու պարագայում կուտակված **Ամերիա միավորների** օգտագործման հնարավորությունը ժամանակավորապես սահմանափակվում է՝ մինչև **Բանկի** նկատմամբ պարտավորության ամբողջական կատարումը:
- 5.7. **Բանկը** պատասխանատվություն չի կրում **Ծրագրի** շրջանակներում **Ամերիա միավորներով** ձեռք բերված ապրանքների կամ ծառայությունների որակի կամ վերջիններիս պատշաճ մատակարարման/մատուցման համար: Գնված ապրանքների և ծառայությունների մասով բողոքները կամ պահանջները պետք է ուղղվեն տվյալ վաճառողին կամ ծառայություն մատուցողին:

6. Ամերիա միավորների չեղարկման պայմաններ

- 6.1. Եթե **Մասնակիցը** իր կուտակված **Ամերիա միավորներից** 18 (տասնութ) ամսվա ընթացքում որևէ միավոր չի օգտագործում, **Բանկն** իրավունք ունի չեղարկել **Մասնակցի** բոլոր կուտակված **Ամերիա միավորները**:

¹ Համաձայն **Ընդհանուր պայմանների** «ՄայԱմերիայով QR/առցանց վճարում» հավելվածի (11RBD RL 72-44-01), ընդունվել է Բանկի Տնօրինության 23/11/2023թ. թիվ 03/170/23 որոշմամբ: Հղումը՝ <https://ameriabank.am/useful-links>

չեղարկվում են նշված ժամկետը լրանալու **օրվան** հաջորդող աշխատանքային օրը: Ընդ որում, 18-ամսյա ժամկետի հաշվարկի առաջին օր է համարվում **Մասնակցի** կողմից առաջին **Ամերիա միավորի** կուտակման օրը, այդ թվում **Ամերիա միավորների** օգտագործման կամ չեղարկման արդյունքում ցանկացած զրոյացումից հետո, իսկ **Ամերիա միավորների** ոչ զրոյական մնացորդ ունենալու դեպքում՝ **Մասնակցի** կողմից դրանց վերջին օգտագործման օրը: Չեղարկված միավորները նվազեցվում են **Ամերիա միավորների հաշվից** և հետագայում չեն կարող վերականգնվել կամ օգտագործվել **Մասնակցի** կողմից:

- 6.2. **Բանկն** իրավունք ունի չեղարկել **Մասնակցի** կողմից կուտակված **Ամերիա միավորները** հետևյալ դեպքերում՝
- 6.2.1. **Միավորները** կուտակվել են սխալմամբ կամ թերի հաշվարկների արդյունքում:
- 6.2.2. **Մասնակցիցը** չեղարկել է իրականացված գործարքը, որի հիման վրա կուտակվել են **Ամերիա միավորներ**:
- 6.2.3. Գործարքը կատարվել է **Բանկի** դիտարկմամբ անբարեխիղճ ձևով, այդ թվում՝ գեղծարարության կամ որևէ այլ չթույլատրված և ապօրինի գործողության արդյունքում և(կամ) ուղղված է եղել **Ամերիա միավորների** կուտակմանը՝ կեղծ կամ շինծու գործարք կնքելու արդյունքում:
- 6.3. Երբ **Մասնակցիցը** չեղարկում է **Ամերիա միավորների** օգտագործմամբ կատարած վճարումը, այն **Ամերիա միավորները**, որոնք օգտագործվել են տվյալ վճարման համար, վերադարձվում են **Մասնակցի Ամերիա միավորների հաշվին**:
- 6.4. Եթե **Մասնակցի** կուտակած **Ամերիա միավորները** սույն **Հավելվածով** սահմանված կարգով օգտագործվել են, և սույն **Հավելվածով** նախատեսված չեղարկման հիմքի/երի առկայության դեպքում **Մասնակցի Ամերիա միավորների հաշվի** մնացորդը բավարար չէ չեղարկումն իրականացնելու համար, **Բանկն** իրավունք ունի չեղարկման ենթակա **Ամերիա միավորներին** համարժեք դրամական միջոցներն անակցեպտ կարգով գանձել **Մասնակցի՝ Բանկում** սպասարկվող ցանկացած հաշվից՝ անհրաժեշտության դեպքում արտարժույթի առուվաճառքը կատարելով գանձման պահի դրությամբ **Բանկում** գործող փոխարժեքով: **Մասնակցի** հաշիվների վրա բավարար դրամական միջոցների բացակայության դեպքում՝ առաջացած պարտքի գումարը ենթակա է վճարման համաձայն **Ընդհանուր պայմանների՝** որպես **Մասնակցի՝ Բանկի** նկատմամբ պարտավորություն: